

Հաստատված է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ

Գիտական խորհրդի կողմից


“ 16.09.2018 ” թ. N 133



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԿԵՆՏՐՈՆ



ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆԿՈՒԹՅԱՆ

ՋԱՅԵՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը (այսուհետև՝ ԳԿՄԿ կամ Կենտրոն) խրախուսում և ապահովում է ուսանողերի, դասախոսական կազմի և այլ անդամների ակադեմիական ազնվությունը և բարեխղճությունը:

ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները պետք է տեղեկացված լինեն Կենտրոնի Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների վերաբերյալ սեփական քաղաքականության և նրանից բխող գործընթացների մասին՝ ակադեմիական ազնվության գաղափարն ընկալելու և տարածելու համար:

Ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականությունը կանոնների և ընթացակարգերի մի համախումբ է, որի նպատակն է նպաստել կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի բարձրացմանը և ստեղծել բարենպաստ պայմաններ ուսանողի ուսումնառության համար:

Ակադեմիական ազնվությունը խիստ անհրաժեշտ է Կենտրոնի կառուցվածքը և ամբողջությունը պահպանելու համար:

Ուսանողները պետք է գործեն համաձայն համապատասխան ակադեմիական ազնվության քաղաքականության և ազնիվ վարքի կանոնների:

Կենտրոնը կրում է պատասխանատվություն ազնիվ կրթական օջախ ստեղծելու ու պահպանելու համար և նպաստում նրա բարգավաճմանը:

Կենտրոնի յուրաքանչյուր անդամ պարտավոր է տեղեկանալ և հասկանալ ակադեմիական ազնվության վերաբերյալ ԳԿՄԿ քաղաքականությունը:

2. Ակադեմիական ազնվության հայեցակարգի նպատակը և խնդիրները

2.1 Ակադեմիական ազնվության գործընթացը և ամբողջությունը պահպանելու նպատակով Կենտրոնում իրականացրել է մի շարք կազմակերպությունների ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականության ու ընթացակարգերի բենչմարքինգ: Ուսումնասիրված համալսարանների (ԱՄՆ-ի Ջորջիայի համալսարանը, ՀՀ պետական կառավարման ակադեմիան, Գավառի պետական համալսարանը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը) լավագույն փորձի և ստացված գիտելիքների հիման վրա մշակվել է ԳԿՄԿ ակադեմիական ազնվության սեփական քաղաքականություն և ակադեմիական ազնվության խախտումների լուծման ընթացակարգ:

2.2 *Բենչմարքինգը*՝ կազմակերպության գործունեության ռազմավարական պլանավորման մոտեցում է, որը ենթադրում է աշխատանքի մեթոդների մակարդակի գնահատման անընդհատ գործընթաց և նպաստում կազմակերպության արդյունավետության բարձրացմանը՝ օգտագործելով նմանատիպ այլ կազմակերպությունների լավագույն փորձը: Դա թույլ է տալիս նաև պարզել կազմակերպության մակարդակը մնացածների նկատմամբ, նպաստում է նոր մոտեցումների ներդրմանը և նվազցնում է ռիսկերը: Բենչմարքինգը տվյալների հավաքագրման և վերլուծության միջոցով տվյալ կազմակերպության համեմատման մեթոդ է այլ ճանաչված կազմակերպությունների հետ:

2.3 Ակադեմիական ազնվության քաղաքականության նպատակն է.

- Խրախուսել և ապահովել ակադեմիական ազնվության էթիկայի նորմերը և պահանջները
- Աշխատանքներ տանել պարզաբանելու գրագողության խնդրի կարևորությունը
- Կազմակերպել գրագողության խնդրի լուծման ընդհանուր ինստիտուցիոնալ մոտեցում
- Կանխարգելել ակադեմիական անազնվության դրսևորումները

- Մշակել ակադեմիական ազնվության, գրագողության դեմ պայքարի, որակյալ, առանց կոռուպցիայի, կրթության սեփական հայեցակարգը
- Պահպանել Կենտրոնի ամբողջականությունը և բարի համբավը:

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 *“Ակադեմիական ազնվություն”* Ցանկացած ակադեմիական աշխատանք, որը պետք է կատարել և ներկայացնել առանց ստելու, առանց խաբեության, գողության կամ առանց այլ անձանց կողմից օգնություն ստանալու և արգելված տեղեկատվական աղբյուրներից օգտվելու:

3.2 *“Ակադեմիական աշխատանք”* Ցանկացած գիտահետազոտական աշխատանք, որը կատարվում է Կենտրոնում՝ դասընթացների, ծրագրերի իրականացման հետ կապված ակադեմիական առաջադիմության ապահովման նպատակով: Դրանք են. ատենախոսությունները, թեզերը, քննությունները, ստուգարքները, կիսամյակային աշխատանքները, հաշվետվությունները, գիտական աշխատանքները և փորձերը, նրանց ներկայացումները: Ակադեմիական աշխատանքը նաև Կենտրոնում դասավանդվող առարկաների հետ կապված ինքնուրույն աշխատանք է, որն ընդգրկում է Կենտրոնում իրականացվող շարունակելի կրթության և հեռակա ուսուցման ծրագրերի կամ Կենտրոնի կողմից առաջարկվող արտասահմանում իրականացվող դասընթացներ:

3.3 Ակադեմիական աշխատանքը կարող է լինել գրավոր, բանավոր կամ էլեկտրոնային:

3.4 *“Ակադեմիական ազնվություն”* Ակադեմիական աշխատանքների կատարում առանց գրագողության, խաբեության, խարդախության, գողության, ինչպես նաև այլ անձանց կողմից օգնություն ստանալու և ոչ հավաստի տեղեկատվական աղբյուրներից օգտվելու արգելքի:

3.5 *“Ակադեմիական անազնվություն”* Կանխամտածված, գիտակցաբար և դիտավորությամբ ակադեմիական աշխատանքի կատարում կամ այլ անձին կատարելու

հրահարում, որը հակասում է ակադեմիական ազնվությանը և չի համապատասխանում սույն Հայեցակարգով սահմանված սկզբունքներին և ընթացակարգերի չափորոշիչներին:

3.6 “Ակադեմիական ազնվության հանձնաժողով”՝ ակադեմիական անազնվությունը քննող, ակադեմիական ազնվության հարցերով զբաղվող 5 հոգուց բաղկացած հանձնաժողով է, որի նպատակն է սույն Հայեցակարգի դրույթների իրագործման ապահովումը Կենտրոնում: Հայեցակարգում նախատեսված ընթացակարգով Հանձնաժողովն ուսումնասիրում է անազնվության դրսևորումները և կայացնում համապատասխան որոշում:

3.7 “Հանձնաժողովի անդամ” Կենտրոնի ուսանող կամ դասախոս, ով ընտրվում է ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովի կողմից, ընդ որում դասախոսն այդ պահին պիտի լինի Կենտրոնի աշխատող, իսկ ուսանողը՝ Կենտրոնում սովորող ուսանող:

Ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովում ընդգրկված են 3 ուսանող և 2 դասախոս:

4. ԱՐԳԵԼՎԱԾ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

4.1 Վարքի ընդհանուր չափորոշիչները և արգելված վարքի դրսևորումներ

- Ուսանողը *գիտակցաբար* չպետք է կատարի կամ աջակցի մեկ այլ ուսանողի կատարել անզանիվ գործողություն ակադեմիական աշխատանքի վերաբերյալ, որը ներկայացվում է ակադեմիական կրեդիտ ստանալու կամ առաջադիմության համար: *Աշխատանքի գիտակցաբար կատարում*՝ ուսանողը տեղյակ է, որ տվյալ ակադեմիական աշխատանքը ներկայացվելու է ակադեմիական առաջադիմության համար, բայց դա չի նշանակում, որ նա նախապես տեղեկացված է, որ տվյալ գործողությունը խախտում է Կենտրոնի ակադեմիական ազնվության քաղաքականությունը:

4.2 Վարքի անագնվության գործողություններ են համարվում.

- Գրագողությունը
- Արգելված աջակցությունը
- Ստելը, խարդախելը, կեղծելը, կաշառելը
- Այլ անթույլատրելի գործողություններ

Գրագողություն՝ առանց համապատասխան սկզբնաղբյուրների վկայակոչման հետևյալ գործողություններն են.

- առանց չակերտների մեջբերումները, այլ անձին պատկանող գրավոր կամ բանավոր խոսքի գործածումը;
- այլ անձին պատկանող գաղափարի, տեսության կամ բանաձևի որպես սեփական աշխատանք ներկայացումը:
- գնել կամ այլ կերպով ձեռք բերել այլ անձի կողմից կատարած աշխատանքի կամ առաջադրանքի գնումը որպես ինքնություն աշխատանքի ներկայացումը:

4.3 Արգելված աջակցություն. քննությունների, ստուգարքների, լաբորատոր աշխատանքների և նմանատիպ այլ գործողությունների կատարման համար դասախոսի կողմից արգելված ցանկացած աջակցություն ստանալը և տրամադրելը, (գրքերի, զրառումների, հաշվիչների տրամադրում, արտագրություն, հուշում, փոխանցում կամ տեղեկությունների տրամադրում):

4.4 Ստելը, խարդախելը, կեղծելը, կաշառելը՝ ցանկացած ակադեմիական աշխատանքի կատարման կամ սույն քաղաքականության իրականացման հետ կապված կաշառքի կամ ցանկացած կեղծ տեղեկությունների տրամադրում: Մասնավորապես՝

- Ակադեմիական աշխատանքի անբավարար կատարման կամ չկատարման դեպքում կեղծ պատճառաբանություններ, քննությանը չներկայանալու կամ աշխատանքը չներկայացնելու համար դասախոսին կամ Կենտրոնի համապատասխան պաշտոնական աշխատակցին կեղծ պատճառաբանությունների տրամադրում:
- Ցանկացած լաբորատոր կամ փորձնական աշխատանքի արդյունքերի կամ ցանկացած տվյալների և տեղեկությունների կեղծում:
- Ցանկացած ակադեմիական աշխատանքի փոփոխություն այն ներկայացնելուց հետո, բացառությամբ այն դեպքերի, եթե նման փոփոխությունները մտնում են առաջադրանքի պահանջների մեջ:
- Համակարգչային սարքավորումների վնասումը, (դիսքերը) կամ լաբորատոր սարքավորումները ակադեմիական աշխատանքի գնահատումը փոփոխելու կամ կանխելու համար, այլ անձին պատկանող համակարգչային նշանաբանից օգտվելը, ինտերնետային կայքի բովանդակությունը կամ մատչելիությունը վնասելը կամ քայքայելը, կամ այլ անձի փոխարեն գործողություններ կատարելը համակարգչային ռեսուրսներ ձեռքբերելու նպատակով:
- Ցանկացած հետաքննության կամ նիստերի վերաբերյալ կեղծ տեղեկությունների կամ վկայությունների տրամադրում:
- Ակադեմիական առաջադիմության համար այնպիսի ակադեմիական աշխատանք ներկայացնելը, որն արդեն նախապես ներկայացվել է:

4.5 Այլ անթույլատրելի գործողություններն են.

- Ակադեմիական ցանկացած աշխատանքին վերաբերյալ տեղեկություններ գողանալը, վերցնելը կամ մեկ այլ բան արգելված կերպով ձեռք բերելը (օրինակ՝ ուսումնասիրել համակարգչային արգելված նյութերը)
- Արգելվում է ակադեմիական անազնվություն համարվող ցանկացած այլ գործողություն, նույնիսկ եթե այն հատուկ կերպով նշված չէ վերը նշված օրինակների ցուցակում:

5 Պատշաճ վարքի դրսևորումներ

5.1 Աշխատանքային գործընթացում ԳԿՄԿ ուսանողները, դասախոսական կազմը, բոլոր աշխատակիցները առաջին հերթին պետք է առաջնորդվեն օբյեկտիվության և արդարության սկզբունքներով, համաձայն ԳԿՄԿ կանոնադրության, ներքին կարգապահական և էթիկայի կանոններով՝ պահպանելով սույն Հայեցակարգի հետևյալ սկզբունքները.

- Օրինականություն,
- Թափանցիկություն,
- Սոցիալական արդարություն,
- Հրապարակայնություն,
- Որակյալ կրթություն,

5.2 Ուսանողները պետք է լինեն ազնիվ ակադեմիական աշխատանքներում և չհանդուրժեն այլ անձանց ակադեմիական անազնվությունը:

5.3 Պրոֆեսորադասախոսական կազմը պետք է լինի հետևողական և կրի պատասխանատվություն դասախոսական կազմի վարքի վերաբերյալ համաձայն սույն Հայեցակարգի:

5.4 ԳԿՄԿ ակադեմիական աշխատակազմը՝ ղեկավար և կառավարման բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք իրենց վարքագծում պետք է դրսևորեն **բարեվարքություն**, այսինքն «ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելուն և այն տարածելուն»:

5.5 *Բարեվարքությունը* ակադեմիական համակարգի կապող օղակ է էթիկական դրական սկզբունքների ու կրթության որակի միջև և միևնույն ժամանակ արգելք՝ կոռուպցիայի դրսևորումների դեպքում:

**5. ԱԿԱՂԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

5.1 Ակադեմիական ազնվության ապահովումն իրականացվում է Կենտրոնի կողմից սահմանված ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականության և սույն ընթացակարգի համաձայն:

5.2 Ակադեմիական ազնվության խախտման դեպքում կրթական գործընթացի յուրաքանչյուր մասնակից ենթարկվում է պատասխանատվության:

5.3 Ակադեմիական խախտումներ կարող են լինել ինչպես ուսանողի, այնպես էլ դասախոսի կամ վարչական աշխատողի կողմից:

5.4 Ակադեմիական ազնվության խախտումը սկզբում քննարկվում է կողմերի (ուսանողի և դասախոսի) միջև և հնարավոր է, որ քննարկման արդյունքում կողմերը համաձայնության գան, հակառակ դեպքում՝ տեղեկացվում է ակադեմիական ազնվության դեպքերը քննող հանձնաժողովին, որն ուսումնասիրելով անազնվության դրսևորումները կայացնում է համապատասխան որոշում:

5.5 Ակադեմիական ազնվության խախտումը դասընթացների ընթացքում

5.5.1 Դասընթացների ընթացքում ակադեմիական ազնվության խախտման արձանագրման դեպքում դասախոսն ուսանողին տալիս է բանավոր նկատողություն: Դասախոսի և ուսանողի միջև համաձայնության չգալու դեպքում խախտումը քննարկվում է ակադեմիական անազնվության հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից:

5.6 Ակադեմիական ազնվության խախտումը քննության ժամանակ

5.6.1 Քննության ընթացքում, եթե դասախոսը կամ քննող հանձնաժողովի անդամն ունի հիմքեր կասկածելու ուսանողին արտագրության կամ գրագողության մեջ, ապա՝

- Բացահայտվում է արտագրությունը կամ գրագողությունը և ուսանողը դուրս է հրավիրվում քննական սենյակից:
- Դասախոսը արտագրության կամ գրագողության փաստը ներկայացնում է ամբիոնի վարիչին կամ անհրաժեշտության դեպքում դեկանին:

– Ուսանողի կողմից ակադեմիական ազնվության խախտման ժխտման դեպքում հարցը քննարկվում է համապատասխան հանձնաժողովի կողմից:

5.6.2 Քննության ժամանակ ակադեմիական ազնվությունը խախտած ուսանողը տվյալ աշխատանքից ստանում է անբավարար կամ ավելի ցածր գնահատական՝ համաձայն տվյալ առարկայի/մոդուլի գնահատման համակարգի:

5.6.3 Եթե ուսանողը երկրորդ անգամ ստացել է ակադեմիական ազնվության խախտման նկատողություն, հանձնաժողովը տեղեկացնում է այդ մասին ԳԿՄԿ գիտական խորհրդին՝ ներկայացնելով ակադեմիական ազնվության խտման փաստաթղթեր:

5.6.4 Հանձնաժողովի նախագահը հրավիրում է Հանձնաժողովի նիստ՝ նշանակելով նիստի օրը և ժամը, նիստին հրավիրելով Հանձնաժողովի անդամներին և տվյալ դեպքին առնչվող կողմերին (ուսանողին և դասախոսին):

5.6.5 Հայեցակարգի դրույթները խախտած կողմը և խախտումն արձանագրող կողմը իրավունք ունեն և պարտավոր են ներկա գտնվել հանգամանքները պարզաբանելու Հանձնաժողովի նիստում: Եթե սույն Հայեցակարգի համաձայն՝ նիստի մասին ծանուցվելուց հետո, կողմերը չեն ներկայանում, Հանձնաժողովին իրավունք է վերապահվում որոշել խախտման առկայությունը և, համապատասխան, որոշում ընդունել:

5.6.6 Եթե նույն խախտումը թույլ են տվել մեկից ավելի անձինք, ապա յուրաքանչյուրի համար կազմակերպվում են Հանձնաժողովի առանձին նիստեր, բացառությամբ այն դեպքերի, երբ Հանձնաժողովի բոլոր անդամները անհամաձայնության են գալիս, որ տվյալ դեպքը լուծելու համար ավելի նպատակահարմար է կազմակերպել Հանձնաժողովի համատեղ նիստ:

5.6.7 Հայեցակարգի խախտումն արձանագրող կողմը, խախտում թույլ տված կողմը և Հանձնաժողովի հինգ անդամները համարվում են նիստի միակ մասնակիցները, որոնք իրավունք ունեն Հանձնաժողովի նիստերի ընթացքում անել հայտարարություններ, տալ հարցեր, պատասխանել առաջադրված հարցերին:

5.6.8 Հանձնաժողովի նիստի ընթացքում խախտում թույլ տված կողմը պետք է ներակայացնի և ապացուցի Հանձնաժողովին, որ մյուս կողմը խախտել է ակադեմիական ազնվության կանոնները:

5.6.9 Կողմերին լսելուց հետո Հանձնաժողովի անդամները գրավոր որոշում են կայացնում՝ ընտրելով պատասխանատվության միջոցը:

5.6.10 Նիստի արձանագրությունը կատարվում է ըստ անհրաժեշտության և կողմերից պահանջել գրավոր բացատրություն:

5.6.11 Հանձնաժողովի նիստից հետո 5 օրվա ընթացքում կողմերը ծանուցվում են որոշման մասին, իսկ որոշման պատճենը ներկայացվում է տնօրենին:

5.6.12 Հանձնաժողովի կայացրած որոշումը կողմերը կարող են բողոքարկել Կենտրոնի տնօրենին՝ ոչ ուշ, քան որոշման մասին ծանուցվելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում:

5.6.13 Կողմերը կարող են դիմում ներկայացնել տնօրենին՝ խախտման դեպքը կամ Հանձնաժողովի համապատասխան որոշումը վերանայելու համար:

5.6.14 ԳԿՄԿ տնօրենը կայացնում է վերջնական որոշում: Որոշման մասին 5-օրյա ժամկետում տեղեկացվում են կողմերը:

Սույն Հայեցակարգը խախտող կողմը կարող է բողոքարկել Հանձնաժողովի որոշումը՝ հետևյալ հիմքերով, մասնավորապես՝

1) պատասխանատվության միջոցը խիստ է,

2) Հանձնաժողովի նիստից հետո ի հայտ են եկել նոր կամ լրացուցիչ հանգամանքներ:

Դիմումում նշվում են բողոքարկման պատճառները և փաստերը և ստորագրվում բողոքարկողի կողմից: